ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 172 - Ա

ք.Արտաշատ

25 հուլիսի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-Ն որոշման դրույթներով և ի կատարումն ՀՀ Արարատի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի № 388-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 8.2 կետի 8.2.1 ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի հուլիսի 25-ին «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ «Այգավան» մասնաճյուղում կազմակերպել և անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն (այսուհետ՝ ՑՀՏՈՒ)՝ «Հակառակորդի հարձակման դեպքում կազմակերպության անձնակազմի պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

2. Նշանակել՝

1) ՑՀՏՈՒ-ի ղեկավար՝ ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին.

2) ՑՀՏՈՒ-ի ղեկավարի տեղակալ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) պետ, փ/ծ փոխգնդապետ Արսեն Ղուկասյանին.

3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Լևոն Միրզոյանին:

4. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.

1) խաղարկման խումբ.

ա. խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ պետի բնակչության պաշտպանության (այսուհետ՝ ԲՊ) բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Զավեն Պողոսյան.

բ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԿ) օպերատիվ հերթապահ հերթափոխի (այսուհետ՝ ՕՀՀ) ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Հռիփսիմե Հովակիմյան.

գ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Հռիփսիմե Պետրոսյան.

դ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ մասնագետ Հարություն Կարապետյան.

2) վերլուծության նախապատրաստման խումբ.

ա. խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ պետ, փ/ծ փոխգնդապետ Սուրեն Գալստյան.

բ. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Հրաչուհի Մարկոսյան.

գ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Նահապետ Զալյան.

դ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատի (այսուհետ՝ ՀՓՋ) հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Գառնիկ Շահբազյան.

3) գործնական միջոցառումների խումբ՝

ա. խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Վեդու ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Շավարշ Գրիգորյան.

բ. ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Մասիսի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Բագրատ Դանիելյան.

գ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Արարատի ՀՓՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Արսեն Բաբագուլյան.

դ. խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Վեդու ՀՓՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Տիգրան Վարդանյան:

5.ՈՒսումնավարժությանը ընդգրկել՝

1) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչությանը .

2) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Արարատի ՀՓՋ-ից երկու մարտական հաշվարկ.

3) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Վեդու ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ և մեկ օժանդակ ավտոմեքենա.

4) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ Արտաշատի ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ և առաջին օգնության մեկ ավտոմեքենա.

5) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ հաշվեկշռում գտնվող օպերատիվ մեկ ավտոմեքենա.

6) ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի ոստիկանության բաժինը.

7) ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արարատի գումարտակը.

8) «Արարատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ՓԲԸ) շտապօգնության 2 բրիգադ.

9) Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի «Արարատ» էլեկտրական ցանցը (համաձայնությամբ).

10) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արարատի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի Արարատի տարածքային տեղամասի վթարավերականգնման ծառայությունը (համաձայնությամբ).

11) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Արարատ» տեղամասի վթարավերականգնողական խումբը (համաձայնությամբ):

6. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) կազմակերպել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը.

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2024 թվականի հուլիսի 16–ին:

7. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

ուսումնավարժության անցկացման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ուսումնավարժության արդյունքների ամփոփագիրը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարի ստորագրմանը:

8. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.

2) ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնները.

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ պետ, փ/ծ փոխգնդապետ Արսեն Ղուկասյանին:

10. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**